ԱԶԳ-ՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԲԱԶՄԱՉԱՓՈՒԹՅՈՒՆԸ

ՍԻՄՈՆՅԱՆ Գ. Է.

XXI դ. մարտահրավերները նոր հրամայականներ են առաջադրել պետական և ազգային շահերի արդիականացման գործընթացներին: Քաղաքակրթության փորձը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր դարաշրջան, իր ընդհանրացնող արժեքաբանությամբ հանդերձ, ներառում է մարդաբանական և սոցիոէթնոմշակութային առանձնահատկություններ՝ պայմանավորված շահերի մեկնությամբ: Արդի քաղաքական գիտությունը, ուսումնասիրելով պետական և ազգային շահերի զուգամիտման գործընթացը, կարևորում է պետության ինստիտուտի էվոլյուցիան և դրա շրջանակում՝ քաղաքական ազգի ձևավորման մշակույթը:

Պետությունը հասարակությունը համախմբող կենտրոնական ինստիտուտ է, որը որոշակի տարածքում կազմակերպում է ազգաբնակչության համատեղ կյանքը՝ իրականացնելով մարդկային համակեցության նորմերի ու կանոնների պահպանություն[1]:

Ընդհանուր առմամբ, ինչպես ցույց են տալիս վերջին տասնամյակի պատմահամեմատական հետազոտությունները, պետության ծագման պատճառները բազմազան են: Պոլիտոգենեզի գործընթացի վրա ազդեցություն են ունենում ներքին և արտաքին տարբեր գործոններ, որոնց առկայությունն էլ նոր պետությունների առաջացման պատճառ է դառնում: Փաստորեն, արդի պետականաշինությունն ունի էթնոազգայնական ծագում, որի պարագայում նորովի են ընկալվում ազգ-պետության ինստիտուտի արդիականացման հիմ-նախնդիրները:

ՄԱԿ-ին անդամակցող երկրների թիվը 2012-ին 193 էր. այն չի փոխվել 2011-ին Հարավային Սուդանի անկախության հռչակումից հետո, սակայն աճելու միտում ունի ներկայիս չճանաչված պետությունների միջազգային ճանաչման դեպքում: Հաշվի առնելով 1945 թվականից ՄԱԿ-ին անդամակցող երկրների թիվը (51)՝ նկատենք, որ միջազգային թատերաբեմում այդ ժամանակներից ի վեր տեղի է ունենում դերակատարների «մանրացման» գործընթաց՝ պայմանավորված ժողովրդաազգային և տարածաշրջանային-մշակութային առանձնահատկություններով[2]:

Ի դեպ, վերջինը ժողովրդաազգային տարանջատման պատրվակից պակաս ազդեցիկ չէ. օրինակ՝ Բելգիայում բնակվող ֆլամանդացիները և վալոնները խոսում են տարբեր լեզուներով, ինչը ստեղծել է բավական

---

[1] **Соловьев А. И.** *Политология: политическая теория, политические технологии, М., 2008, с. 178.*

[2] *http://www.un.org/ru/members/growth.shtml*

լարված մթնոլորտ հոլանդախոս Ֆլանդրիայի և ֆրանսախոս Վալոնիայի ազգայնականների միջև: Դրա հետևանքով Բելգիան սահմանել է համաշխարհային ռեկորդ քաղաքական ճգնաժամի շարունակականության առումով. մեկ տարուց ավելի է, ինչ երկիրն ապրում է դաշնային կառավարության բացակայության պայմաններում[3]:

Տարածաշրջանային-մշակութային առանձնահատկությունների «անջատողականությունը» կարելի է նկատել նաև միևնույն ծագում ունեցող ժողովուրդների մեջ, օրինակ՝ գաղափարական տարբերություններով առանձնացող Հյուսիսային և Հարավային Կորեաները, Իրաքում բնակվող սյունի և շիա մահմեդական արաբների փոխադարձ անհանդուրժողականությունը և այլն: Նմանատիպ անջրպետներ են ի հայտ գալիս այն ժողովուրդների և էթնոսների մոտ, որոնցում բացակայում է միևնույն ճակատագրի գիտակցումը պատմագենետիկ մակարդակում: Դրանով ազգը տարբերվում է ժողովրդից: Հենց դա է համախմբման կայուն համակարգը աշխարհի բոլոր հայերի համար՝ անկախ բնակության վայրից, քաղաքական տարակարծություններից, գաղափարական և կրոնական տարբերություններից և նույնիսկ գործառվող լեզվից: Որպես օրինակ կարելի է բերել Հրանտ Դինքի սպանության գործով դատավարությունում նրա ընտանիքի շահերի պաշտպան, իրավաբան Ֆեթհիե Չեթինին, որը, ապրելով թրքացած և իսլամացած ընտանիքում, չի կորցրել իր ազգային պատկանելության գիտակցումը: Նա հրապարակայնորեն կատարում է բազմաթիվ ուսումնասիրություններ «ծպտյալ» հայերի վերաբերյալ. «1915 թվից հետո այստեղ մնացած մի քանի ընտանիքներ արտաքինից ներկայանում են իբրև մահմեդականներ և ունեն թուրքական անուններ, սակայն գաղտնի շարունակում են պահպանել իրենց սովորույթներն ու լեզուն: Այս մարդկանց կոչում են «ծպտյալ» հայեր: Պարզվում է՝ այս խմբի ներկայացուցիչները ձնավորում են ընտանիքներ մերձավորներից (ներհամայնքային ամուսնություններ), թեև դա հակասում է իրենց սովորույթներին, սակայն միակ ճանապարհն է սեփական ազգային պատկանելությունը և կրոնը անաղարտ պահպանելու համար[4]«:

Համաձայն Ու. Ալտերմատի ուսումնասիրության, ոչ բոլոր ազգերն են ձգտում զարգացնել միջազգային իրավունքով ճանաչված ազգ-պետությունը, և ամեն ազգ-պետություն չէ, որ կազմավորվում է բացառապես մեկ ազգի կողմից. «Շվեյցարիան բազմաէթնիկ է, բայց, այնուամենայնիվ, արդի իմաստով այն ազգ-պետություն է: Որոշ հետազոտողներ Շվեյցարիայի պարագայում նախընտրում են հին ձևակերպումը՝ ազգությունների պետություն:… Բայց ամեն դեպքում ո՞ր ազգ-պետությունը բառի ուղիղ իմաստով չի համարվում ազգերի պետություն: Ֆրանսիայի պարագայում կարելի է անտեսել տարբեր էթնոսների և ազգերի հանգամանքը, երբ վճռորոշ չափման համար դիտարկվում է լեզուն: Ազգ-պետությունը իդեալական

---

[3] *http://ria.ru/world/20110707/398594221.html*

[4] *http://analitika.at.ua/news/2009-05-06-8198*

առումով վերացական երևույթ է: Պետությունը և ազգը նույնական են միայն շատ հազվագյուտ դեպքերում»[5]:

*Լատիներեն ծագում ունեցող natio բառը ի սկզբանե նշանակել է արենակցական կապ ունենալու հատկանիշ: Այդ բառի արմատը՝ nasci, նշանակում է ծնվել: Հայերենում nacio բառի հոմանիշը ազգն է, որի նախարմատը՝ ազ-ը կամ զա-ն, արիական ծագում ունի: Ընդունված է համարել, որ ազ նախարմատը հնդեվրոպական լեզուները ժառանգել են մայր լեզվից, նույն ազ արիական արմատով են կազմված նաև ռուսերեն язык (князь) և լատիներեն nacio բառերը: Ազգը բաղադրյալ բառ է. կազմված է **ազ** (սերում, ծագում) բառարմատից և **գ** հնչարմատից: Այսինքն, մեր ընկալման մեջ ազգը հավասարազոր է ընտանիքին, մասնավորապես, սեմիոթիկ վերլուծության շնորհիվ պարզվում է, որ հայ ազգի գլխավոր առանձնահատկությունը մարդաբանական նույնատիպությունն է, այս իմաստով, բոլոր հայերի գերդաստանի ծառերը սերում են մեկ արմատից, ուստի իրեն ազգ կոչող հասարակությունը նույնանում է ընտանիքի հետ, այսինքն՝ մարդիկ ենթագիտակցորեն միմյանց ասոցացնում են քրոջ և եղբոր հետ: Հավանաբար, դա է պատճառը, որ մեր քաղաքացիները փողոցում միմյանց դիմում են ընտանիքի անդամներին հատուկ դիմելաձևով: Վերոգրյալի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը Ալտերմատի մատնանշած այն եզակի երևույթն է, երբ պետությունը և ազգը նույնական են, այսինքն՝ Հայաստանի Հանրապետությունը, բառի ուղիղ իմաստով, ազգ-պետության եզակի օրինակ է: Ելնելով հերմենևտիկայի հիմունքներից՝ նկատենք, որ հայոց ազգին այլ կերպ անվանելը ոչ միայն սխալ է, այլ նաև ազգային անվտանգությանն ուղղված սպառնալիք, քանի որ ազգին ցանկացած այլ բառով բնութագրելը, օրինակ՝ ժողովուրդ, հաճախ նույնականացվում է համախմբման գործընթացը խաթարող երևույթների հետ: Ասվածի վառ օրինակ է Սիրիայում տեղի ունեցող քաղաքացիական պատերազմը, որն արտահայտվում է ներժողովրդական բախումների տեսքով: Ներկա դրությամբ, Սիրիայում իշխանությունն ու ուժային կառույցները գտնվում են ալավիտների ձեռ- քում, Սիրիայի նախագահ Բաշար Ասադը նույնպես ալավիտ է: Ալավիտները սոցիալ-կրոնական կազմավորում են, դավանանքով մոտ են շիա մահմեդականներին: Սիրիայում բնակվող ալավիտները տասնամյակներ շարունակ իշխող կառավարական ու բանակային կառույցների հիմքն են դարձել: Նրանց իշխանության գլխավոր ընդդիմադիրը Սիրիայի ազգային խորհուրդն է, որը Ասադի կառավարմանը վերջ տալու նպատակով երկրի ներսում մարտեր է մղում: Սիրիայի ընդդիմադիր ուժերը հանդես են եկել հայտարարությամբ, որտեղ հստակ երևում է ժողովրդին հատուկ անհամասեռ կեցվածքը, որը բնորոշ չէ ազգին. «Ալավիտները շարունակում են մնալ սիրիական ժողովրդի կարևոր մասը, ուստի նրանց իրավունքները միշտ կպահպանվեն: Որպես ապացույց՝ մենք ձեռք ենք մեկնում ալավիտներին՝ համատեղ կառուցելու*

---

[5] **Альтерматт У.** *Этнонационализм в Европе, М., 2000, с. 67.*

բազմազգ, իրավական պետություն»[6]: Մեջբերման մեջ պարզ երևում են ժողովրդի մեջ առկա «մենք» ու «նրանք» տարանջատումները, ինչը հատուկ չէ ազգին. ազգը միատարր է և բաղկացած չէ մանր ինքնություններից, այն մեկ ինքնություն է որոշակի քաղաքակրթության սահմաններում: Պատկանելով միևնույն քաղաքակրթությանը՝ Սիբիայում բնակվող գաղափարամշակութային տարբերություններ ունեցող արաբները պատմականորեն չեն ձևավորվել իբրև ազգ մեկ ճակատագրի գիտակցման համատեքստում:

Եթե մարդկային հանրույթը բնականից զուրկ է ազգային պատկանելության զգացումից, ապա այն տվյալ հասարակարգում սերմանելու կարիք է առաջանում:

Գիտակցելով նման հասկացությունների դրսևորման առանձնահատկությունները՝ XIII դ. ազգ (natio) բառը փոխառնվեց անգլերենում և սկսեց օգտագործվել արենակցական կապ ունեցող խմբին անվանակոչելու նպատակով: Հետագայում ազգ բառը օգտագործվեց ֆրանսիական հեղափոխության տարիներին, տարբեր մարդաբանական սկիզբ ունեցող ֆրանսախոսներին արենակցական համերաշխություն ներարկելու և որպես ազգ համախմբելու նպատակով. «Պետության պաշտպանության համար ռազմական ուժը բավարար չէ, մինչդեռ ազգի կողմից պաշտպանվող պետությունը անպարտելի է (Նապոլեոն Բոնապարտ (1769-1821))»[7]:

Ազգը, լինելով քաղաքակրթորեն կայուն համակարգ, համեմատաբար ավելի մեղմ է տանում ներազգային ցնցումներն ու միկրո միջավայրի լարվածությունը, քան դա կարող է անել ժողովուրդը, բացի այդ, ազգը արտաքին մարտահրավերներին պատասխանում է համախմբված, մեկ ճակատով: Այդ հանգամանքը ստիպեց մի շարք երկրների, մասնավորապես եվրոպական, կերպափոխելով և վերաիմաստավորելով ազգ հասկացությունը՝ այն հարմարեցնել իրենց բազմաէթնիկ հասարակություններում՝ ստանալով ազգային գիտակցության նոր մակարդակ մշակութային համերաշխության հիմքի վրա: Ազգը ի սկզբանե բնական ծագում ունի, այն արենակցական, ցեղատոհմային հասարակարգի էվոլյուցիայի հետևանք է, պետությունը նույնպես էվոլյուցիոն ծագում ունի, բայց ստեղծվել է «բնական» ազգի ներսում՝ հանրային կյանքի բարդացման, և արդիականացման հետևանքով, հայրիշխանության կարգի հիման վրա: Դասական առումով ազգի և նրա ձևավորած պետության հայրիշխանական բնածին սկիզբը կարելի է գտնել հայկական քաղաքակրթության տիրույթներում: Անկասկած, այդ արքետիպը հայկական նախաքրիստոնեական իրականությունից է գալիս, սակայն այն արդիականացել է քրիստոնյա Հայաստանում: Այդ գործընթացին մեծապես օժանդակել է հայկական քաղաքակրթության վերածննդի նախահայր Գրիգոր Նարեկացին (951-1003 թթ.): Արդի հայ հեղինակները, ուսումնասիրելով Նարեկացու թողած

---

[6] *http://www.panarmenian.net/arm/news/95902/*

[7] *Великие мысли великих людей: большая книга афоризмов, сост. Кондрашев А. П., Комарова Н. И., М., 2004, с. 1010.*

ժառանգությունը, լուսաբանել են ազգին ուղղված քաղաքական ուղերձը՝ որպես ազգ-պետության ներքաղաքակրթական ընկալման առանձնահատկություն. «Հեղինակը (Նարեկացին – Ս. Գ.) Մարդուն չի պատկերացնում առանց հայրախնամ իշխանության, որը Աստծո թույլտվությամբ նաև երկրային իշխանությունը իրականացնողի առաքելությունն է[8]«:

Արևմտյան ծագում ունեցող քաղաքագիտական դպրոցները, վերաիմաստավորելով և արդիականացնելով դասական ազգ հասկացությունը, այն համահավասարեցրին մշակույթին՝ դրանով իսկ անտեսելով այն հանգամանքը, որը մշակույթը ազգի միայն մեկ հատկանիշն է: Համաձայն Է. Գելների, մշակույթները լինում են «վայրի» և «ջերմոցային». «Դրա (մշակույթի – Ս. Գ.) վայրի տեսակներն իրենց արտադրում ու վերաարտադրում են ինքնաբերաբար, որպես մարդկանց կյանքի մի մասը: Չկա հանրություն, որ համատեղ կեցության նորմերի ու հաղորդակցության համակարգ չունենա: Այս կարգի վայրի համակարգերը (ուրիշ խոսքով՝ մշակույթները) սերնդե սերունդ վերարտադրում են իրենց, առանց որևէ գիտակից ծրագրի, հսկողության կամ հատուկ սննդի:

Մշակովի կամ ջերմոցային բույսերը ուրիշ են, չնայած դրանք էլ են ծագել իրենց վայրի տարբերակներից: Սրանք ավելի բարդ են ու հարուստ և մեծ մասամբ օգտվում են գրագիտության ու մասնագետների ծառայություններից և կոչնչանան, եթե զրկվեն այդ անգնահատելի գուրգուրանքից, եթե չլինեն դրանց նվիրված մասնագետներին քիչ թե շատ կրթող, բազմաթիվ ու մասնագիտական կրթօջախները[9]«:

Որպեսզի մարդը համարվի ֆրանսիացի, պիտի լինի Ֆրանսիայի քաղաքացի, լինի ֆրանսախոս, նույնականանա ֆրանսիական մշակույթին, այսինքն՝ իրեն համարի այդ մշակույթը կրող, մինչդեռ Հայաստանի Հանրապետության քաղաքացի, հայերեն խոսող և իրեն հայ համարող ֆրանսիացին հայ չէ, լավագույն դեպքում նա կարող է լինել հայերի բարեկամ, և այս տարբերակի միակ խոչընդոտող հանգամանքը ծագումն է, ինչը կոնկրետ հայ ժողովրդի համար խորքային և կարևոր սկզբունք է: Ազգին բնութագրող հենց այդ պարագան էլ բազում դարեր պետականազուրկ հայությանը զերծ պահեց օտար հասարակություններում ուծացումից: Ազգային համերաշխության գիտակցումն է հայությանը պետականակերտ ավյունով օժտել: Հայերը դարեր ի վեր տարբերակել են սեփական քաղաքակրթական առանձնահատկությունները, ինչն էլ գիտակցական և ենթագիտակցական յուրօրինակ օժանդակություն էր ազգի ուծացումը կանխելու համար: Այս իմաստով ուշագրավ է Հ. Գևորգյանի ուսումնասիրությունը, որտեղ ամփոփված են նախորդ դարում և մինչև

---

[8] **Մարգարյան Մ., Զաքարյան Մ.,** *Ինքնակառավարման սկզբունքը Գրիգոր Նարեկացու ճանաչողության հայեցակարգում (Շողակն, 2011, Օգոստոս Ա, N 15, էջ 4):*

[9] **Գելներ Է.,** *Ազգերը և ազգայնականությունը (թարգմ. Հարությունյան Մ.), Ե., 2003, էջ 66-67:*

Առաջին համաշխարհային պատերազմը Հայաստան այցելած եվրոպացի քաղաքական և գիտական գործիչների կարծիքները հայ ազգի պետականաշինության պատրաստակամության վերաբերյալ. «…հայերը պատրաստ են ինքնուրույնաբար վարելու իրենց ազգային կյանքը, ունենալու ազգային պետություն, որովհետև նրանք օժտված են, եվրոպական չափանիշներով, պետականության համար անհրաժեշտ հատկանիշներով[10]«:

Համաձայն Արիստոտելի (մ.թ.ա. 384-322), մարդիկ՝ իբրև սոցիալական արարածներ, ձգտելով կատարելության, անընդհատ փոխհարաբերվում են միմյանց հետ, ինչի շնորհիվ, անխուսափելիորեն ձեվավորում են հասարակություն և նրա ֆորմալ կազմակերպությունը՝ պետությունը: Մարդիկ հակված են արարել սեփական կենցաղը՝ ըստ իրենց բնական, ֆիզիոլոգիական բնագդների, ուստի, ինքնապաշտպանության և սեփական տեսակի վերարտադրության բնագդների ազդեցությամբ, մարդը ձևավորվել է իբրև հանրային տեսակ: Հենց այդ իռացիոնալ պահանջմունքները բավարարելու նպատակով ի հայտ են գալիս ռացիոնալ պահանջմունքներ, որոնք ապագայում Է. Ֆրոմը կանվանի մարդու «նույնականացման բնագդ», այսինքն՝ նա կարիք ունի հաղորդակցման, շփման: Վերոգրյալի հիմնական ապացույցը թերևս այն է, որ բոլոր կենդանիներից միայն մարդն է զարգացրել իր հաղորդակցական կարողությունները. «Քանի որ, ինչպես երևում է, յուրաքանչյուր պետություն ներկայացնում է իր տեսակին հատուկ շփում, յուրաքանչյուր շփում կազմակերպվում է հանուն ինչ-որ բարիքի (քանզի յուրաքանչյուր գործունեություն ենթադրում է ակնկալվող բարիք), ապա, ակնհայտ է, որ յուրա- քանչյուր շփում ձգտում է (stokhadzontai) այս կամ այն բարիքի, որտեղ բարիքներից ամենաբարձրագույնին բոլոր շփումներից առավել ձգտում է այն շփումը, որը համարվում է մյուսներից ամենակարևորը և իր տիրույթներում ընդգրկում է մնացյալ շփումները: Հենց այդ շփումն էլ անվանում են պետություն…[11]«:

Արիստոտելը տղամարդու և կնոջ միասնությունն ու դրանից բխող՝ ընտանիքի արարումը դիտարկում է որպես մարդկային իռացիոնալ պահանջմունքի ռացիոնալ դրսևորում, որի շարունակական զարգացման արդյունքը պետության ձևավորումն է, հետևաբար՝ ընտանիքը նա համարում է իբրև պետական բարդ համակարգի մանրագույն մասնիկ՝ բջիջ, որի ստեղծմանն ու կայացմանը մեծապես նպաստում է շփումը՝ իր հաղորդակցման բոլոր միջոցներով, որոնցից կարևորագույնը խոսքն է. «Խոսքը կարող է արտահայտել և օգտակարը, և վնասակարը, ինչպես նաև այն, ինչ արդարացի է, և այն, որ անարդար է: Դա մարդու այն հատկանիշն է, որը տարանջատում է նրան այլ կենդանի արարածներից. միայն մարդը կարող է հասկանալ բարին և չարը, արդարությունն ու անարդարը և այլն: Իսկ

---

[10] **Գևորգյան Հ. Ա.,** *Ազգ, ազգային պետություն, ազգային մշակույթ, Սիմֆե-րոպոլ, 1997, էջ 17:*

[11] **Аристотель.** *Политика [пер. с древнегреч.], М., 2010, с. 22.*

այս ամենի ամբողջությունն էլ արարում է ընտանիքի և պետության հիմքերը»[12]:

Գաղափարախոսությամբ արիստոտելյան փիլիսոփայությանը մոտ Ֆ. Էնգելսի (1820-1895 թթ.) հետազոտություններում նույնպես հստակ կանոնակարգված է ազգ-պետության առաջացման և զարգացման էվոլյուցիոն գործընթացը: Էնգելսի «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» գրքում ուսումնասիրվում են որոշ ազգերի հանրամշակութային պատմությունը, ինչպես նաև այդ քաղաքակրթության ներկայիս կրողների առասպելախորհրդանշանային արժեհամակարգերը՝ պարզելու համար պոլիտոգենեզի հիմնախնդիրը՝ որպես ազգի քաղաքական կամքի ուղղակի դրսևորում: Հետազոտությունը հիմնվում է հնագետ Մորգանի լայնածավալ ուսումնասիրությունների և Արիստոտելի կողմից մանրակրկիտ ներկայացվող հույն ազգի առաջացման ու նրա քաղաքային կյանքի՝ պետության վերակազմակերպման պատմության վրա: Պատմամշակութային հիշատակումներն ու հնագիտական հետքերի և արքետիպերի վերծանումը ստեղծեց մի համոզմունք, որ մարդու կողմից հավելյալ բարիքի արարումն ու այն պաշտպանելուն միտված ջանքերը արարեցին հասարակական շերտավորումներ, որոնց բարդ, ցանցային հարաբերությունների կանոնակարգման և ուղղորդման համար հորինվեցին օրենքներ, և հիմնվեց դրանց վերա-հսկման գործառույթը կատարող պետությունը[13]:

Յուրաքանչյուր տեսություն մասնակի կամ լիովին պարզաբանում է պետության ծագման էությունն ու նշանակությունը, լույս է սփռում այն բոլոր առաջնային ու երկրորդական ազդակների վրա, որոնց առկայությունը կամ բացակայությունը նպաստել են ազգի պետականաստեղծ կամքի դրսևորմանը: Այդ առումով ուշագրավ է, որ բոլոր հայտնի տեսություններում առկա է պետության ծագմանը նպաստող հետևյալ հիմնական սկզբունքների ընդհանրությունը՝ մշակութային վերելք ապրող ազգ, արտաքին կամ ներքին սպառնալիքներից անկախ մնալու կամք, սոցիալական բարդացող հարաբերություններ:

Անշուշտ, վերոգրյալ ցանկը կարելի է լրացնել ևս հարյուրավոր այլ նախադրյալներով, բայց դրանով կխախտվի պետության ծագման բոլոր տեսությունների համանմանության պայմանը, քանի որ նրանց միջև տարբերությունները հաճախ մշուշոտ են:

Սա խոսում է այն մասին, որ պետությունը գործիք է՝ չափազանց հզոր և կարևոր մեխանիզմ, որի միջոցով որոշակի քաղաքակրթական սկիզբ ունեցող ինքնիշխան ազգերը, ընդհանուր բարիք արարելով, դրսևորում են քաղաքական կամք՝ սեփական տեսակը արտաքին և ներքին ցնցումներից անվտանգ պահպանելու համար:

---

[12] *Նույն տեղում, էջ 25:*

[13] **Энгельс Ф.** *Происхождение семьи, частной собственности и государства, СПб., 2009.*

Պետության ծագման, զարգացման, բազմազանության և ինքնիշխանության ընկալումների հիմնահարցերը դարեր ի վեր կախված են եղել հասարակական մտածելակերպի էվոլյուցիայից՝ ընտանիքի վերաբերյալ պատկերացումներից, մշակույթի, ավանդույթների և գիտության առաջընթացի մշտական փոխազդեցություններից, և հանրային փոխհարաբերությունների շարունակական արդիականացումից: Այդ երևույթը Ռ. Ինգլհարտը բնութագրել է հետևյալ կերպ. «Մարդկանց աշխարհընկալման (worldviews) խորքային ու համատարած փոփոխությունները կերպափոխում են տնտեսական, քաղաքական և սոցիալական կյանքը՝ վերաիմաստավորելով քաղաքական ու տնտեսական նպատակները, կրոնական նորմերն ու ընտանեկան արժեհամակարգը: Այս փոփոխությունները, իրենց հերթին, ազդում են տնտեսական առաջընթացի տեմպի վրա, քաղաքական կուսակցությունների ռազմավարական նպատակների և ժողովրդավարական ինստիտուտների հավակնությունների վրա»[14]:

Համաձայն Է. Թոֆլերի, մարդկությունը, սպառելով կենցաղավարման հին աշխարհընկալումը, անցում է կատարում իր իսկ արդիականացմամբ պայմանավորված նոր հասարակարգ, որտեղ ավանդական բոլոր սկզբունքները ենթարկվում են կերպափոխման և վերաիմաստավորման: Մոտավորապես 10000 տարի առաջ սկսվեց գյուղատնտեսական հեղափոխությունը, որը հիմնովին փոխեց մարդկանց հին հասարակարգը, երբ նրանք ապրում էին փոքրիկ ցեղերով և հիմնականում զբաղվում էին հավաքչությամբ ու որսորդությամբ: Գյուղատնտեսական հասարակարգը Թոֆլերն անվանում է «Առաջին ալիք». «XVII դ. փոփոխությունների այդ առաջին ալիքը դեռևս չէր սպառել իրեն, երբ Եվրոպայում հանկարծ ի հայտ եկավ արդյունաբերական հեղափոխությունը, և սկսվեց համաշխարհային փոփոխությունների երկրորդ՝ մեծ ալիքը: Այդ նոր գործընթացը՝ արդյունաբերականացումը, շատ ավելի արագ սկսեց շարժվել՝ ընդգրկելով մայրցամաքներ և երկրներ[15]«: Ըստ թոֆլերյան «երեք ալիքների» տեսության, մարդկությունը XXI դարում կանգնած է «երրորդ»՝ ամեն ինչ կերպափոխող ալիքի շեմին: Այս պահի դրությամբ ընթանում է անցման գործընթացը, որը պայմանավորված է ճգնաժամերով, հին համակարգերի տապալումով, պետական, ոչ պետական և միջազգային բազում ցնցումներով, որոնց ընթաց-քում արդիականացվող հասկացությունները ստանալու են նոր նշա-նակություն, իսկ կարծրացած և չկերպափոխվող երևույթները դուրս են մնալու ժամանակի հոսանքից. «Երբ՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ընկած ժամանակաշրջանում արդյունաբերականության հոսանքը հասավ իր գագաթնակետին, երկրի վրա սկսեց թափ հավաքել քչերի կողմից ընկալվող Երրորդ ալիքը՝ կերպափոխելով այն ամենը, ինչին հպվեց:

---

[14] **Инглхарт Р.** *Постмодерн: меняющиеся ценности и изменяющиеся общества (Полис, 1997, N 4, с. 6).*

[15] **Тоффлер Э.** *Третья волна, М., 2004, с. 39.*

Այդ պատճառով շատ երկրներ միաժամանակ զգում են երկու կամ նույնիսկ երեք՝ միանգամայն տարբեր «փոփոխության ալիքների» ազդեցությունը, ընդ որում, երեքն էլ միմյանցից տարբերվում են թե արագությամբ, թե ուժով[16]«:

Անշուշտ, այդ գաղափարահոգեբանական կերպափոխումներն անդրադառնում են ազգ-պետության նշանակության, ընկալումների, ռազմավարական նպատակների, գործառության և ինքնիշխանության տիրույթի նվազման կամ աճի վրա: Ներկայիս միջազգային հարաբերությունները հիմնված են համաեվրոպական Երեսնամյա պատերազմի արդյունքի՝ Վեսթֆալյան հաշտության պայմանագրի (1648 թ.) հիմունքների վրա, որոնք են՝

• ազգային շահի գերակայություն,

• ուժերի հավասարակշռության սկզբունք,

• ազգ-պետությունների գերակայություն,

• պետական ինքնիշխանության սկզբունք՝

– սեփական գործերին չխառնվելու պահանջ ներկայացնելու իրավունք,

– պետությունների իրավունքների համահավասարություն,

– ստորագրված պայմանագրերը կատարելու պարտավորություն,

– միջազգային իրավունքի գործառնության սկզբունք և միջազգային հարաբերություններում դիվանագիտության կիրառում[17]:

Սակայն հասարակարգերի էվոլյուցիան կերպափոխել է նաև միջազգային հարաբերությունների Վեստֆալյան մոդելը: Դիտարկումների շնորհիվ պարզ է դառնում, որ բոլոր հասարակարգերը ծնունդ են առնում մարդկային քաղաքակրթության անվտանգության պահպանման նպատակով, յուրաքանչյուր մտածելակերպ կենդանի է մնում այնքան ժամանակ, քանի դեռ կարողանում է հոգալ մարդկային հասարակության հիմնական գերխնդիրը՝ անվտանգությունն ու կենսունակությունը: XX դ. հայտնի իրադարձություններ-ը եկան ապացուցելու այն, որ միջազգային կարգի Վեսթֆալյան մոդելը, որը ազգ-պետություններին օժտում էր անսահմանափակ ինքնիշխանությամբ, սպառել է իրեն: Ամբողջ խնդիրն այն է, որ շարու-նակ բարդացող աշխարհում տեխնոլոգիական առաջընթացը և հաղորդակցության միջոցների լայն հնարավորությունները ստեղծե-ցին միջազգային բնույթի մարտահրավերներ, որոնք վեր են յու- րաքանչյուր ազգ-պետության իրավասության տի- րույթներից և ստանձնում են տարածաշրջանային, որոշ դեպքերում նաև համաշխարհային բնույթ, օրինակ՝ զանգվածային ոչնչացման զենքերի արտադրությունը, համաշխարհային ահաբեկչությունը, էկոլոգիական խնդիրները, թմրանյութերի ապօրինի շրջանառությունը, ցեղասպանությունը, ստրկատիրությունը և այլն: Այս ամենը համաշխարհային չարիքներ են, ուստի դրանց լուծման գործում ներգրավված է միջազգային ողջ հանրությունը՝ իր ինստիտուցիոնալ ներուժով[18]:

---

[16] *Նույն տեղում:*

[17] *http://lib.4i5.ru/cu318.htm*

[18] **Михайлова В. А.** *и* **Буянова В. С.** *Глобализация, М., 2008, с. 154.*

Վեստֆալյան համակարգի արդիականացման կարևոր պահն այն է, որ նրա ներսում առաջացան և սկսեցին ակտիվորեն գործել համակարգեր, որոնք այսօր վերափոխվել են նոր անդրազգային դերակատարների, որոնց գործունեությունը տարածվում է մի քանի երկրների սահմաններում: Դրանց թվին են պատկանում՝ միջկառավարչական կազմակերպությունները, տրանսազգային կորպորացիաները և բանկերը, միջազգային ոչ կառավարչական կազմակերպությունները, ներպետական շրջանները (վարչատարածքային կազմավորումները՝ կանտոններ, դաշնային հողատարածքներ, պետություններ, նահանգներ և այլն), կրոնական կազմակերպությունները և շարժումները, միջազգային հանցավոր և ահաբեկչական խմբավորումները և այլն: Այդ ամենի հետևանքով այսօր նկատվում է նոր անդրազգային դերակատարների ակնհայտ քանակական գերակայություն պետության նկատմամբ: Եթե վերջիններիս քանակը արդի աշխարհում մոտավորապես 200 է, ապա միջկառավարչական կազ-մակերպությունների թիվը հասնում է 5 հազարի, ոչ կառավարչականներինը՝ ավելի քան 27 հազար է (միջազգային մակարդակում ակտիվորեն գործողների թիվը մոտավորապես 6 հազար է), իսկ տրանսազգային կազմակերպություններինը, ՄԱԿ-ի տվյալների համաձայն, XX դ. 90-ականի վերջին կազմել է ավելի քան 53 հազար: Միջազգային հարաբերությունների նոր դերակատարների առաջացմանն ու զարգացմանը մեծապես նպաստել է սկզբունքորեն նոր տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների առաջացումը: Աշխարհի քաղաքական կառուցվածքի որակական փոփոխություններն առաջին անգամ նկատել են Ռ. Կոհենը և Ջ. Նայը 70-ա-կան թվականներին (գծապատկեր):

Գծապատկեր



Կոհենի և Նայի դիտարկումները ցույց տվեցին, որ պետությունները, մնալով առաջատար դերակատարներ համաշխարհային քաղաքական թատերաբեմում, սկսեցին ներգրավվել բարդ փոխհարաբերությունների մեջ ոչ միայն միմյանց, այլ նաև ուրիշ միջազգային դերակատարների հետ: Դրա

հետ մեկտեղ միջազգային փոխգործակցության բոլոր դերակատարների գործառնության ոլորտները զարմանալիորեն փոխկապակցված են[19]:

Այս ամենի հետևանքով ազգ-պետություններն ապրում են ինքնիշխանության մասնակի պատվիրակման ժամանակաշրջան, երբ կան ներազգային և ներպետական որոշակի խնդիրներ, որոնց լուծման իրավասությունը այլևս չի կարող լինել միայն տվյալ ազգի կամ տվյալ պետության իրավասությունների շրջանակում: Այն կարող է ունենալ նաև միջազգային հնչեղություն, օրինակ՝ Իրանի Իսլամական Հանրապետության «Խաղաղ ատոմի» ծրագիրը:

Ազգերի ինքնիշխանության քաղաքագիտական ընկալումը շատ ավելի խորքային և պատմական նշանակություն ունի, քան այն կարող է թվալ առաջին հայացքից: Ներկայիս «գլոբալացման» պայմաններում նույնպես նկատվում են միկրոազգային քաղաքականություն վարելու միտումներ: Այսինքն՝ քաղաքական և տնտեսական միավորումներում տեղի են ունենում քաղաքակրթական, ազգային, ժողովրդական, մշակութային երանգ ունեցող տարբեր ցնցումներ: Վերջին մի քանի տարիների իրադարձությունները Եվրոպայում և Ասիայում ցույց են տալիս, որ այնտեղ առկա են «ազգային համախոհության» ընդգծված երևույթներն ընդդեմ բազմաքաղաքակրթական միավորումների ազդեցության: 2012 թ. հունվարի 22-ին, Բուդապեշտում մոտ 100 հազար մարդ հանրահավաք է արել ի պաշտպանություն երկրի վարչապետ Վիկտոր Օրբանի և ընդդեմ ԵՄ-ի: Ցույցի մասնակիցները ծածանում էին Հունգարիայի պետական դրոշները և կրում էին ցուցանակներ, որոնցով հորդորում էին ԵՄ-ին հարգել Հունգարիայի ազգային ինքնիշխանությունը[20]: Հունվարի 26-ին Շոտլանդիայի կառավարության ղեկավար Ալեքս Սելմոնդը բրիտանական խորհրդարանում հայտարարել է, որ Շոտլանդիան պատրաստվում է անջատվել Միացյալ Թագավորությունից՝ անկախ նրանից, թե զարգացումների այս տարբերակը որքանով է ձեռնտու Բրիտանիային. «Ինձ ասում են, որ Լորդերի պալատում կան մարդիկ, որոնք իրենց իրավունք են վերապահում տարանջատել այն սահմանները, թե ինչ կարող է և չի կարող անել Շոտլանդիան: Նրանց պետք է հիշեցնել Բերնսի գրած հավասարության մասին օրհներգը, որն անցյալում ևս հնչել է այս խորհրդարանում[21]«: Նման օրինակները բազմաթիվ են աշխարհի բոլոր անկյուններում՝ ույգուրների ապստամբությունը Չինաստանի հյուսիսա- յին շրջաններում, բասկերի անջատողական քաղաքականությունը Իսպանիայի նկատմամբ, աբխազների և օսեթների անկախացումը Վրաստանից, ֆլամանդացիների բողոքները Բելգիայում ընդդեմ խտրականության, քրդերի պետականաստեղծ պայքարը Հյուսիսային

---

[19] **Торкунов А. В., Тюлин И. Г., Мельвиль А. Ю.** *и др. Современные международные отношения и мировая политика, М., 2004, с. 249.*

[20] *http://www.lenta.ru/news/2012/01/22/thousands/*

[21] *http://armenpress.am/arm/news/676998/Շոտլանդիան_վերահաստատել_է_Մեծ_Բրիտանիայից_անջատվելու_գ.html*

Իրաքում և պատմական Մեծ Հայքի տարածքներում և այլն: Այդ ամենը ցույց է տալիս, որ բոլոր ժամանակներում ազգերը և ժողովուրդները եղել և մնում են միջազգային հարաբերություններ- ի գլխավոր դերակատարները՝ տիրապետելով ինքնիշխանության տարբեր մակարդակների: Վերոգրյալի հիմքի վրա հնարավորություն ենք ստանում զուգահեռներ անցկացնել ԽՍՀՄ-ի փլուզման գործընթացի և դրանից հետո եղած քաղաքական զարգացումների ընդհանրության միջև: ԽՍՀՄ-ի փլուզումը ներկայացվել է որպես էթնիկական բախումների և սոցիալական հիմնախնդիրների բարձրաձայնման արդյունք: Այսինքն, ԽՍՀՄ-ի փլուզման հիմնական և գլխավոր պատճառը ազգային ինքնության նկատմամբ սխալ քաղաքականության հետևանք էր. կոմունիզմ կառուցելով՝ խորհրդային կարգերի ճարտարապետները խորապես արհամարհեցին խորհրդային ազգերի և ժողովուրդների հիմնախնդիրները, ինչը սարից գլորվող ձնագնդի արդյունք ունեցավ: Հենց ազգային խնդիրներն օգտագործվեցին ԱՄՆ-ի կողմից խորհրդային կայսրությունը կազմաքանդելու նպատակով. այդ մասին այսպես է արտահայտվել վերլուծաբան Զ. Բժեզինսկին. «ԽՍՀՄ-ի հետ մրցակցությունը ձգվում էր 40 տարի, և այդ ընթացքում մենք աշխատել ենք միմյանց դեմ և բացահայտ, և գաղտնի: ԱՄՆ-ն ուներ մշակված լիարժեք ծրագրեր՝ դեպի ժողովրդավարություն ԽՍՀՄ-ի ընթացքը խթանելու նպատակով, ինչպես նաև ԽՍՀՄ-ի տարբեր էթնիկ խմբերում ազգային ինքնագիտակցության ամրապնդման, հեռուստացույցի և ռադիոյի միջոցով ամերիկյան գաղափարների ներթափանցման համար»[22]: Վերակառուցման տարիներին ԽՍՀՄ ազգային քաղաքականության կոպիտ սխալներից մեկը 1986 թ. կենտրոնական իշխանությունների կողմից Խորհրդային Ղազախստանի գլխավոր քարտուղար Ա. Կունաևի փոխարեն ազգությամբ ռուս Գ. Կոլբինի նշանակումն էր, որից հետո Ալմա Աթայում տեղի են ունենում ազգային խռովություններ. ղազախ ուսանողները և աշխատավորները դուրս են գալիս քաղաքի հրապարակ, վիրավորների թիվը անցնում է հազարից, երեք հոգու սպանում են, որոնցից երկուսը ռուսներ էին: «Հետո ես հասկացա,- ասաց Մ. Գորբաչովը,- որ մենք թույլ տվեցինք սխալ՝ ինչո՞ւ այդպես, ինչո՞ւ Ղազախստանում գլխավոր չնշանակեցի ղազախի»[23]:

Վերջապես, յուրաքանչյուր ազգ իր գոյությամբ ավելի բովանդակալից և հիասքանչ է դարձնում երրորդ հազարամյակի համամարդկային քաղաքակրթությունը՝ լցնելով սոցիոմշակութային տարածության այն հատվածները, որոնք մյուս քաղաքակրթության կրողները ի վիճակի չեն զբաղեցնել: Ս. Հարությունովը գրում է. «Չգիտեմ՝ ով ինչպես, իսկ ես կարծում եմ, որ եվրոպական աշխարհի գեղեցկությունը կդառնար անգույն և տխուր, եթե նրանից վերանային լոպարներն ու բասկերը: Եվ այն շատ կշահեր, եթե այսօրվա Տոսկանայում շարունակեին ապրել 200-

[22] СССР, Крах Империи: серия 2 – Апокалипсис. “Производство ООО ”Авиатр продакшн”, по заказу ОАО “Телекомпания НТВ”, 2011 год. Автор и ведущий В. Чернышев.

[23] СССР, Крах Империи: серия 4 (32:19) – Первая кровь. “Производство ООО “Авиатр продакшн”, по заказу ОАО “Телекомпания НТВ”, 2011 год. Автор и ведущий В. Чернышев.

300 հազար էտրուսկներ: … Ընդհանուր առմամբ, ոչ միայն Եվրոպան, այլև Իտալիան մեծապես կշահեր իր տնտեսությունում, քաղաքականությունում, նույնիսկ ուղղակի գրոսաշրջային ենթակառուցվածքում էտրուսկական գործոնի առկայության դեպքում: Նույնիսկ քաղաքականապես ձևավորված էտրուսկական անկլավը չէր խանգարի, ինչպես չի խանգարում Սան-Մարինոն: Եվ, իհարկե, որպես հայ, ես անսահման ուրախ կլինեի, եթե Հայաստանի հարևանությամբ, բացի 80 մլն թուրքերից, ապրեին գոնե 2-3 մլն խեթեր ու շումերներ և ունենային սեփական ազգ-պետությունները»[24]: Պատմությունը ցույց է տալիս, որ էթնոքաղաքականությունը եղել և մնում է գերակա սկզբունք՝ ներառելով մնացյալ բոլոր հարաբերությունները, և դա բնական է, քանի որ մարդու անձնական շահերը նույնականանում են սեփական մարդաբանական և մշակութային տիպին հատուկ հանրային շահերի հետ: Ուստի ակնհայտ է, որ ազգային յուրահատկություններով պայմանավորված աշխարհընկալումն իր ասոցիատիվ ենթագիտակցությամբ բազմազան է ճիշտ այնքանով, որքանով որ բազմազան է Երկրի էթնոքաղաքակրթական բնաշխարհը: Հանրագումարելով նշենք, որ հետարդիական հասարակարգի ձևավորման շեմին քաղաքակրթական բազմազանության քաղաքական ակտիվության դրսևորումները նոր մարտահրավերների առիթ են դառնալու ազգ-պետությունների համար: Դրանք հաղթահարելու նպատակով անհրաժեշտ է ազգի համախմբվածության պայմաններում վարել ճկուն և գրագետ քաղաքականություն՝ բախման գաղափարախոսությունից երկխոսության անցում կատարելու համար:

ЦЕННОСТНАЯ МНОГОМЕРНОСТЬ РАЗВИТИЯ НАЦИИ-ГОСУДАРСТВА

СИМОНЯН Г. Э.

Резюме

Историко-сравнительный анализ нации-государства, а также семиотический анализ нации позволяет понять морально-психологическое влияние нации на самоорганизационные и самореализационные процессы. Новейшие концепции постмодернизма сводятся к тому, что цивилизационные интерпретации действительности и мировоззренческие изменения в массовом сознании приводят к формированию новых социально-политических реалий с новыми типами угроз и противодействий.

Мир меняется, и эти перемены оказывают влияние на изменение мировоззрения нации и представлений о базовых ценностях человеческого бытия.

[24] *Этнос и политика: хрестоматия, сост. Празаускас А. А., М., 2000, с. 32.*